

Փասնակ, բայց չեն յիշուիր առ մեզ դիւ-  
ցազնացեալք. և ոչ ինքն Տիգրան արկից  
կիրորսի, ի վիպասանից ազգին հռչակեալ և  
սիրելի քան զամենքն, բայց եթէ ի տես-  
լեան Աթղահակայ (Խորեն. Ա ). իսկ իր  
որդին կամ Թոռն Վահագն, գերազանցեալ  
քան զԴիւցազունս, վասն որոյ և յիշուելու  
է շաստուածոց հետ: — Իսկ Արշակունեաց  
ժամանակ՝ անոնց նահապետ Վաղարշակայ  
համար կ'ըսուի որ իր նախնեաց անդրինները  
Հայոց մեհենաց մէջ մտուց և պաշտելի ըլլաւ.  
իր որդիքն և Թոռունք (Արշակ Ա և Արտա-  
շէս Ա) այնքան արիական գործեր ըրին՝ որ  
Դիւցազանց կրճային մտենալ. յետնոյս որ-  
դոյ աշխարհակալ Տիգրանին արեւուն այլ  
կ'երդնուին ի կենդանութեանն, բայց Հոսով-

մայեցիք խաւարեցուցին զայն: Ասոնցմէ զար-  
մի կամ երկու վերջը՝ Բ Արտաշատցայ և  
Երուանդայ վրայոց կարծուածն և ըսուածն  
արդէն յիշեցինք (եր. 35 ). ասոնց ժամա-  
նակակից և գործակից մեծ սպարապետն  
Սմբատ բագրատունի՝ Արարաջ կոչուելով ի  
վիպասանից, (զուցէ և յեզորէն Արտաշա-  
ղայ՝ բանաստեղծ Վրոյրէ) անտարակոյս է որ  
ի դիւցազնութիւն վերառեալ է: Ենորհիւ բա-  
նաստեղծութեան և երաժշտութեան՝ այս-  
պիսեաց անուանք և յիշատակք՝ Թափանցե-  
լով և ընդ քրիստոնէական վարապոյր, նա և  
յետ ամենայն ջանից Լուսաւորիք և Տրդա-  
տայ, ըսուէին և ի Գ զարու ի Փոստոսէ  
Բազանդայ, և ի Եին ի Խորենացոյ:  
(Շարայարեչի)

## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԶԱՆՏՐԻ

(Տես յ'էջ 491)

Բժիշկ Բարայելի հանդիպումն. — Ժամանումն յԱզոչիս. քաղքին տեսքը, բնակիչքը.  
Ազոչեաց մեծաստեր. — Մեզի ի պատիւ կատարուած հանդիս. — Արևոռ խաւարում:

14 յունիս. Թէպէտեւ մասնաւոր  
կերպով մը համակրութիւն կը ըզ-  
գանք Օրդուբաս քաղաքի, ուր այն-  
չափ լաւ ընդունելութիւն գտանք, և  
ամուսինս կարող եղաւ հետաքրնական  
մարդարանական գիտողութիւններ ը-  
նել, սակայն որոյեցինք ճամբայ ելլել:  
Քաղաքէն մեկնելու ատեննիս հանդի-  
պեցանք բժիշկ Բարայելի Տիգրիսեց-  
ւոյ որ կրմանշահէն կը գառնար: Ի-  
մաստուն բժիշկը՝ ուսման ընթացքը  
կատարած է ի Փարիզ, և ամուսնոյս  
աշակերտակից ըլլալով մի և նոյն վար-  
ժարանի մէջ, մէկէն ծանօթ և բարե-  
կամ եղան իրարու:

Պարսկաստան զրկուած էր Բարայել  
ուսումնասիրելու և հետազօտելու թէ  
ուստի՝ կու գայ յԵւրոպա մաղձախտը  
կամ քոլէրա, և անոր ընթացքը գի-  
տելու: Հիւանդութեան հետքը թէպէտ  
տեղ մըն ալ գտած չէր, որովհետեւ  
ձմեռ ատեն ճանապարհորդած էր,  
բայց ամենուրեք այնպիսի աղտեղու-  
թիւն և ողջպահիկ հնարից և միջու-  
ցաց անհոգութիւն տեսեր է, որ ա-  
մառուան եղանակիս համաճարակին  
երևումը անկարելի չի համարիր:  
Իր նպատակն եղած է դարձեալ զգու-  
շացընել ժողովուրդը այս հարուածէն,  
վախցընելով և բռնադատելով որ

նախնական զգուշութիւններն ընելու անհոգութիւն չընեն։ Ամէն տեղ ջուրք ազտեղեալ են, և հիւանդութեան երեւան ելլելուն տարերք կը տեսնուին պարսիկ և բուրդ ժողովրդոց վրայ։ Սակայն հաւանական է որ Հայաստանի կողմէն քոլէրա հիւանդութիւնը մուտ չգործէ ի Ռուսաստան, որովհետեւ ամէն տեղ այն կողմերը կառավարութեան խնամքովը և խստապահանջ ճշդութեամբ, հասարակաց առողջութեան ամէն միջոցք ի գործ դրուած են, ինչ որ ցայսօր անծանօթ էր այն աշխարհաց մէջ։ Բայց ինչ ընելու է ամէն մաքրութեան հակառակող տղիտական և զօրացած սովորութեանց դէմ կուռելու և յաղթանակելու համար։ Այսպէս յՕրդուրատուր այնչափ առատահոս են աղբերքը, թաթարք ճամբաներու վրայ յալ ու ձախ վազուկ չըրեք կը խմեն։

Օրդուրատէն ելլինուս՝ կ'անցնինք ցամաք բլուրներէ և թերթահերձ քարերով ձևացած ժայռերէ։ կ'անցնինք Ագուլիս—չայ, ոչ հեռի յաւերակաց գեղով մը՝ որ կործանեցաւ 1884ի ուղղմանէն, և քիչ ետքը կը ներկայանայ մեզ իր դալարազուարթ այգեք և պարտիզք ստորին Ագուլիս, որ է ի կէս ճանապարհին ընդ Օրդուրատ և վերին Ագուլիս։

Ստորինը երեքհարիւր տուն ունի և 1200 բնակիչ, մաս մը թաթարք, մաս մ'ալ Հայք։ Պարսպապատ է, և դուռը՝ ընդ որ կը մտնեն, ամէն գիշեր կը գոցուի։ Երեք վերատ անդին է վերին Ագուլիս, ուր կը սպասեն մեզ։

Ագուլիսի այցելութիւն՝ մեր ճանապարհորդութեան նախահաշուին մէջ փախուստ մ'էր, հաճոյք մը ուզոյ, աւետեաց երկիր՝ որոյ վրայ դրած էինք մեծամեծ յոյսեր՝ հանգչելու և անգործութեամբ վայելելու։ Կապուս մ'էր վերջապէս՝ յետ այնչափ նկարագրութեանց որովք զբաղեցուցինք

ընթերցողքը, վասն զի Ագուլիս՝ թէպէտ պղտի քաղաք մը, բայց հռակեալ է ընդ ամենայն Հայս իւր հաճոյական բնակութեամբ, և զուարթատեխի ամարանոց մ'է հայ հարուստ վաճառականաց և սեղանատարաց, դարարեք չըլլապատ տներով, զովագին ու հանոյատեխի ովախս մը։

Հայք ֆոքրիկ պարսիս կը կոչեն, որովհետեւ բնակչաց շատերն Եւրոպա ըրած իրենց այլ և այլ ճանապարհորդութիւններովը՝ երկրին բարուց անծանօթ սովորութիւններ և ախորժակք բերեր են հետերին, բաց ի սակէ, աւելի յառաջադէմ գաղափարաց տեարք են, և կարգէ դուրս սէր և ծարաւ ունին ուսմանց և գիտութեանց։ — Բնակչաց մեծագոյն մասը Հայք են, և թէպէտ թաթարաց թաղ մ'ալ կայ, բայց խիստ խեղճ և աղքատին։

Բազմաթիւ յանձնարարականներ ունինք Ագուլեաց բնակչաց վրայ, և շատերն արդէն զմեզ ընդունելու սենեակները պատրաստեր են. ուստի մեծ է տաղանապիս, որովհետեւ ամենուն ջով չենք կրնար իջնել միանգամայն, և ոչ մէկու մը սիրտ կոտրել։ Դրուած միջնորդի մը խորհրդով՝ Տէր—Միքայէլեանցի ասպնջականութիւնն ընդունեցանք, որոյ եղբայրն հիւրընկալեր էր զմեզ ի Գատար, և շատ յառաջ գրեր էր ծանուցանելով, և ինչպէս կը թուի՝ կարգի դրեր էր որ Տէր—Միքայէլեանց ընտանեաց քով հիւրասիրուինք։

Ինչպէս Օրդուրատ և Մեղրի, Ագուլիս այլ վաթսուներեք տարուրնէ ի վեր կը պատկանին Ռուսիոյ։ Ատեն մը Պարսից սահմանին մէջ էր, և շըրջապատ երկիրներովը կը ձևացընէր Հայաստանի պատմական բաժանմանց մին, Զօկաստան կամ Զօկերու երկիրը, Պողթան գաւառին մէջ։

Նոյն իսկ մեր օրերը՝ Ագուլեաց հայ բնակիչներուն Զօկ անունը կու

տան, որոյ նշանակութեան ալ պլելայլ մեկնութիւններ կ'ընծայեն, Հինժամանակներ՝ երբ ժողովրդական բանաստեղծութիւն Հայաստանի այս կողմերը կը բարձրաւճէր, Զօկե իբրու հագնեբարդուք և վիպասանք համարուած էին: Յետոյ քերթողի գիրքը վաճառականականի հետ փոխելով, յորում քիչ ատենի մէջ վարպետ հանդիսացան, իրենց կարգէ դուրս շահատիրութեան պատճառաւ Զօկ բառը համանուն և զաւ ագահի, և այս նշանակութեամբ ալ ցայսօր կը գործածուի:

Զոհակ անունով իշխան մ'ալ կայ, ի սերնդոց Հայկայ (?), որոյ համար կ'աւանդի թէ այն կողմանց տիրելով, իր հպատակաց և ծառայից Զօկ անունը տուած ըլլայ: Ինչ ալ կարծենք, այս յայտնի է զօկ գաւառաբարբառ մը կայ՝ շատ տարբեր դասական և նոր հայ լեզուէն, ու Մեղրի ու Ագուլիս քաղաքաց մէջտեղ գտնուող ութ գիւղերու մէջ կը խօսուի: Հինգ վեց տարի կայ որ Մ. Սարգիսեանց Սըղ-նախեցի, ուր արդէն ազուկեցի Հայոց գաղթականութիւն մը կայ, Զօկերոշ լեզուին քերականութիւն մը հրատարակեց:

Նոր քաղաք է Ագուլիս, և եօթնևտասներորդ դարուն Պարսից և թուրքաց պատերազմաց ատեն՝ զանազան անգամ ասպատակուած, 1352ին բընակիչքն ասպատակելով Պարսից դէմ, պաշարեց զիրենք Ազատ-խան, տիրեց քաղաքին և ասպատակաց շատը սրէ անցուց:

Մասնաւոր կնիք մը կը ներկայացընեն Ագուլեաց բնակիչք: Բարձրահասակք են ընդհանրապէս, արք թըխագոյն՝ գրեթէ արաբական գեղեցիկ տիպար մը՝ շատերը նշանաւորք գետութեամբ և արուեստիւք, բազմութիւք եւս որ բժշկական ուսմանց ընթացքն ըրած են յԵւրոպայ: Մասցեաց կենդրոն մը կրնայ համարուիլ՝ աշխատասէր, լուսաւորեալ և հարուստ

ժողովրդեան: Ագուլիս՝ « այգիներով լի » կը նշանակէ, և ամենագեղեցիկ է գիրքովը: Լեբան մը ստորտօր կը տարածուի քաղաքը, և ի թիկանց լեբանց բարձունք՝ յաւիտենական ձիւններով փայլեալ, որք գիւմաստակեր են արևադարձային բարեխառնութեան և հրաշալի կապոյտ երկնքին: Եւ այս լեբանց մերձաւորութեան շնորհիւ՝ զովագին հողմունք Երասխայ դաշտաց անտանելի տաքութիւնը կը հեշտացընեն:

Եօթն թաղերու բաժնուած է քաղաքը: Հայոց ճոխից տուներն ընդհանրապէս մեծ չէնքեր են, յալ ու ի ձախ գարձիւ աւելի ընդարձակուած: ճակտին երկայնութեամբ՝ յարկածածուկ ճեմելիք մը կայ՝ այլևայլ վերնագաւիթ մտիւք: Գլխաւոր չէնքին և երկկողմեան թեւոց միջավայրն՝ պարտեզ մ'է՝ խնամքով և գեղեցիկ ճաշակաւ զարգարուած, մեծ աւազանաւ մը՝ ուր տան բնակիչք երբեմն կը լուացուին: Հոն կ'աճին որթիք, թիթենիք, լեմոնք, նունենիք և թզենիք: Նոյնպէս առատութիւն վարդից, որովք ճարտար տնարարք բնտիր անոյշներ կ'եփեն. շուշանք, բարբիտք կակաչք, յակիմիթք. անանկ որ օդը լեցուած է անոնց անուշաբոյր հոտովը:

Ագուլիսի կանանց հին հագուստի ձևը բոլորովին տարբերի Մեղրիի մէջ գործածուածներէն: Գլխակապն շատ աւելի մեծ է, և ոսկեայ զարդարանք՝ պճնուած պերողակօք (turquoises) և պատուական ակամաք՝ ճոխք են և գեղեցկակերտք: Բերանին ալ թանձր պատանօք կը ծածկեն, ինչպէս նաև գլուխին: Պառաւ կնոջ մէկը զիս խօսիւ յարիմանեց բաց գլխով փողոց ելլելու համար, և ստիպեց որ շուտով գլխարկս առնելու երթամ, զի ամթ մեծ էր բաց գլխով տեսնուիլ: Ինձի կ'երեւնայ թէ այս կինը՝ ինչպէս ամէն կողմերու տարիքնին առած հայ կանայք, նախամեծար կ'ընտրեն

զմահ՝ քան բաց գլխով և բերնով մեկու մը առջև երևնալը :

Քիչ անգամ հանդիպեցայ որ կանայք պատանքը բերաննին՝ էրիկ մարդոց հետ կերակուրի նստին. բայց մտքէս պիտի չեղէ երբէք ծիծաղելու անդիմադարձ վախկա՞մ զոր ունեցայ օրուան մէկը, յորում պառաւ հայ կին մը հրաւիրեր էինք հետերնիս թէյ առնուլ : Շատ հետաքրքիր էի թէ ինչպէս պիտի ընէ. ու Յովհաննէս՝ որ հայ մ'է, թևովը զիս կը դրդէր սնոր բռնելիք կերպին վրայ մտադրութիւնս հրաւիրելով : Գաղտուկ աչք մը կը ձգէր չորս կողմը գտնուողներուն, կը դիտէր թէ ուր է նայուածքնին. ու իր վրայ չեղած առանձն կը վերցընէր բերանը գոցող կայք, ու պուտ մը թէյ առնլով, նորէն մէկէն տեղը կը դնէր : Դժբաղդաբար մեծ էր գիմացը դրուած բաժակը, ուստի և համեմատ եղաւ քաշած նեղութիւնն ու դժուարութիւնը : Սակայն ասիկայ արգելք մը չէ որ երիտասարդութիւնը հետևի եւրոպական նորաձևութեանց, թէպէտ իրենց մամբրուն մեծ տհաճութեամբը :

Հանդերձից նախնի սովորութեանց մէջ՝ նշանաւոր էին պարսկական գեղեցիկ մետաքսեայք, ինչպէս նաև լիոնի դորժուածք, և Հնդկաստանի գեղեցիկ քաշմիւրք : Ոչ ինչ նուազ գեղեցիկ և ճոխ է նաև կանանց տարազն...

Դպրոցք յԱղուլիս գովութեան արժանաւորք են թէ կարգաւորութեամբ և թէ յառաջադիմութեամբ : Բնակչաց տուրքերովը կը պահպանուին, և քանի մը ազուլեցուց առատատուր տրիք հաստատուած են : Տղոց շատին համար ձրիավարժ է դաստիարակութիւնն, իսկ հարուստներն կամ բաւական կարողութիւն ունեցողք տարին տասնէն ինչուան քսան բուպլի կը հատուցանեն : Աղջկանց դպրոցին դրան վրայ այսպիսի գրուած մը տե-

սայ. Դպրոց աղջկանց՝ մարց ընկերութեան :

Հարկ է ճշմարտութեան համար յաւելուլ և զայս ինչ, թէ քաղաքիս հոգաբարձութիւն՝ ժողովրդեան աւանդէն աւելի մտացի և համակրելի անձի մը յանձնուած է, Մէլիք Յովհաննէս կոստանդինեանցի, որ գիտէ ի Հայոց և ի թաթարաց խառն ժողովրդեան մը մէջ պահել և պահպանել բարեկարգութիւնն ու համաձայնութիւնն, որ դժուարին բան մ'է, մանաւանդ ջրոց բաշխման նկատմամբ : Վասն զի ջրոց խնդիրը՝ կեանքի մը խնդիր դարձած է այն կողմերու բնակչաց համար, և չի կրնար ենթադրուիլ թէ որպիսի՝ վէճք, հակառակութիւնք և ինչուան երբեմն արիւնհեղութիւնք տեղի կ'ունենան ջրոց բաշխուման պատճառաւ : Իսկ հոս, այդ անպատեհութիւններէն խուսափելու համար՝ ամենայն ինչ բարուք կարգադրուած է. վասն զի գլխաւոր մը սահմանուած է, մէջևրնէն ընտրուած ու իրենց վստահութեան արժանաւոր անձ մը, ապա հսկող մը, և ուրիշ մ'ալ պահպան սահանաց դնելու :

Գեղեցիկ սկուռք կը մատակարարեն և ընտան զպէտս ժողովրդեան : Այս աղիւրներէն մին՝ մէկուկէս վերստ հեռի է ի գեղջէն, Սրբոյն թո՛վմայի կոչուած մենաստանին մօտ. 140 բարեխառնութեամբ կը բղխէ, ու հոյակապ ջրանցքով մը՝ ամենամաքուր և պաղ պաղ կը հասնի մինչ 'ի քաղաքն :

Տատուերկու եկեղեցիք կան յԱղուլիս, բայց աւելի նշանակութիւն ունեցողներն՝ երեք կամ չորս են միայն : Եկեղեցեաց և մատանց յահախութեան՝ որոնց ամէն տեղ կը հանդիպինք ի Հայս, պատճառք բընակչաց բարեպաշտական սովորութիւնն է, կառուցանելով այն սրբավայրքը ի հանգիստ հոգւոյ իրենց ննջեցելոցը կամ անձանց փրկու-

թեան. նոյն մտքովը կը կառուցուին նաև հիւանդանոցք: Ուրիշ սովորութիւն մ'ալ, իրենց հանգուցելոց մա. հուան տարէլցին տեղւոյն աղքատաց ողորմութիւն բաշխելն է, և երբեմն նաև կերակուր:

Հարստութեան ու կարողութեան տէր անձինք բաւական կը գտնուին հոս, զոր շահած են վաճառականութեամբ կամ յանձնակատարութեամբ, որովք կը պարապին ի գլխաւոր քաղաքս Ռուսիոյ, Պարսից, Հոլանդիոյ և Հնդկաց, ինչպէս նաև ի Մարսելլ, Մոնսիէլէ, Լիոն և յԱնգղիա:

Վաճառականական ախորժական և յարմարութեամբ՝ բոլոր աշխարհ քալելով, Ագուլեցին տարւոյն մեծ մասը երկրէն ու քաղաքէն դուրս կ'անցընէ. և պատմեցին մեզ թէ վեցե օթը տարուան բացակայութիւն՝ սովորական բան մ'էր հոն, մանաւանդ քանի որ հիմակուան ճանապարհաց և հազորգակցութեանց դիրքութիւնք չըկային: Այն միջոցին կանայք պահպանք տանն և ընտանեաց՝ կը մեծցընեն զակնեան, բայց միշտ տխուրք և մտահոգք իրենց հեռաւոր սիրելեաց վիճակին վրայ: Կենաց այս կերպը, յորմէ անբաժան են երկրին քաղաքական ազէտք, լուրջ և տխրական կերպարանք մը դրոյմած է երեսնին, և որ կը նկատուի ինչուան իրենց օրիորդաց վրայ, և ինձ մեծ զարմանք կ'ազդէ: Բնաւորութեամբ անոյշ և տխուրք են միանգամայն, նման հայկական բանաստեղծութեան և երաժշտութեան: Իսկ երբ ագուլեցին հանգչելու տարիքին կը հասնի, և տղաքը մեծնայով և զօրանայով կրնան իր տեղը բռնել, կը գառնայ ի գերկս ընտանեացն, ի վայելել զարգիւնս վաստակոց, և հաճոյիւք ետևէ կ'ըլլայ ի զարգարել և գեղեցկացընել տունը տեղը, այն ամէն միջոցներով և գիւրութեամբ՝ որոց ականատես եղած է ճանապարհորդութեանց առթիւ: Ըն-

գունելութեան սենեկացը մէջ կը հանգիպի տեսնել Եւրոպայի այլեայլ գրականակական հանդիպց թերթերը:

15 յունիս. — Կ'երթամք այսօր յայց վանաց Սրբոյն թովմայի, որ Ագուլիսի հնագոյն շէնքն է: Իր հիմնարկութիւնն, ինչպէս կը զրուցուի, էլ միածնի վանքէն երկու տարի ետք եղած է, և տասնչորս դարու շէնք է: Բայց այս հնութիւնը միայն հիմնարկութեան կը պատկանի, որովհետեւ այլեայլ անգամ նորոգուած և ընդարձակուած է: Մեր հոն գտնուած առտն, յանձուած էր վանահայրութիւնն Գեր. Գրիգորի Ազապիբեանց, գիտութեամբ նշանաւոր անձի մը, որ սիրալիբ ընդունելութիւն ըբաւ մեզ, մանրապատում ցուցընելով ինչ որ ի վանս էր:

Եկեղեցւոյն մէջ մարմարեայ զարդարուն խորան մը կայ, ձեռակերտ պարսիկ արուեստագիտի: Մեծ գրան վրայ ընդարձակ արձանագրութիւն մը, աւանդելով շէնքին հիմնարկութեան պատմութիւնն, և խորաքանդակ նկար մը որ կը ներկայացընէ ի միջավայրի զԹիսուս և զՍուրբն թովմաս, յաջմէ Մագդաղենին և զլուսին, և ի ձախմէ զԿոյսն Սուրբ և զարեգակն: Իր ամբողջութեամբը, աննըչան կրնայ համարուիլ մենաստանին ճարտարագետութիւնը, և կը բարձրանայ ծառերու և անխնամ երեսի վրայ թողուած պարտիզաց մէջ, հողէ պարսպով շրջապատուած: Չախակողովը բոլորչի շէնք մը կայ՝ աղիւսայարկ կամարակապ, որոյ համար կ'աւանդեն թէ մենաստանին ամենահին մասն է: Կամարին մէջ բացուած պատուհան մը կը լուսաւորէ այդ բուրջին, որոյ ներքին կողմը՝ խեցւոյ ձեւով եօթն խորշեր կան պատին վրայ. և կ'ըսեն թէ մնացորդք ըլլան հրոյ հին տաճարի մը, որ յետոյ քրիստոնէական տաճարի փոխուեր է: Ընտիր ջրոյ աղբիւր մը կը հոսէ. և կը կորսուի գետնափորի մէջ:

Մեկնելով ի վանաց, Մէլիք կոստանդինեանց ստարչինայի ընկերելովը կ'երթանք տեսնել գհետս մեծ և գժբադդ արկածից 1884ի թաթառին, Նոյն պահուն Ագուլիսի միջէն անցնող գետը յանկարծ հեղեղի մը կերպարանք առնելով, քշեց հետը տարաւ ինչ որ ճամբուն վրայ դիմացն հաննեբէն փրթած և հեղեղէն քշուած ահագին կոյտք՝ գետ հոն կեցած են աւերուած տներուն տեղը: Միայն քանի մի վայրկեան տեւեց թաթառը, և սակայն հարիւրաւորք են ըրած զուհերը: Կ'երեւի թէ գետն յառաջ ուրիշ ուղղութիւն ունեցած ըլլայ և հիւսերով զայրացած և աճած՝ յանկարծ առջի ընթացքը բռնելով խորտակեր եւ փլուզեր է ամեն ընդ առջը ելած արգելքներն:

16 յունիս. — Պ. Միքայէլեանց մեծ ճաշ մը կու տայ այսօր ի պատիւ մեր, որուն կը նախագահէ պատուական և համակրելի եպիսկոպոսն Ագուլեաց, Գեր. Գրիգոր Աղափիրեանց, ուրոյ գեղեցիկ կերպարանացը վրայ կը փայլին բնաւորութեան աղտութիւն և զուարթամտութիւն: Այլակողմընըստած եմ, ամուսինի ձախը: Մտարչինա Մէլիք՝ սեղանի վրայ բաժակաւ մաղթանաց պետ կարգուած է. այս տեղի բնակչաց սովորութեան համեմատ՝ վայրկեան մը հրաւիրելոց քրքուաւորը կը գառնայ, որովհետև ինքն է կարգադրող գինեոյ բաժակները, երգեր, յանկարծաբանութիւնք, և չի թողուր ամենևին որ սեղանի բազմողաց բաժակք պարապ մնան:

Հպիւ առաջին կերակուրք կը հըրամցուին, և ահա օրիորդք, որ կոչնականին բարեկամք կամ ազգականք են, կը խոսեն կը լեցուին սեղանի ընդարձակ սրահին մէջ, ու այլևայլ ազգային և ուրիշ տաղեր կ'երգեն. որ վրաս մեծ աղեցութիւն կ'ընեն, մանաւանդ որ երգողաց ձայներն ներ-

գաշնակ են և քաղցրալուր. և արժան է ըսել թէ ձայնի անուշութեամբ համբաւանուն են Հայք և նշանաւոր երգիչներ ընծայած:

Ճաշի ժամանակ յորում ստիակն համադամք ընդ եւրոպականաց կը մրցին, առատապէս մատուակին Երասխայ, կախեթի, Մուղրանքի առնուանի գինիք, ինչպէս նաև գաղղիականքն, որ չեմ գիտեր թէ ինչ ճամբով մինչև հոս եկած են:

Բռնաւոր Մէլիքին ձայնը կը բարձրանայ ստիպելով զբազմականս. ամենք պարտին խմել, խմցընել իրենց կարգին, և գրեթէ երեսուն անձիք ենք: Այն՝ որոյ բարեկենդանութիւն մաղթելով կը խմուի, պէտք է որ քանի մը խօսքով շնորհակալութիւնը յայտնէ: Սեղանին վերջամալուր տեսնենքն կ'երգեն հետգհետէ, և Գեր. Աղափիրեան հաստ գեղեցիկ ձայնով գաղղիական երգ մը կը նուագէ:

17 Յունիս. — Ուսումնական տարւոյն վերջն են Ագուլեցիք և դպրոցաց քննութեանը ժամանակ. ուստի վերատեսուչք ինդրեցին մեր քանի մի վայրկեանի ներկայութիւնը: Պզտի աղջկուք ուս լեզուի քննութիւնը կու տան երբ ներս կը մտնենք: Մեծ հաճութեամբ ներկայ գտնուեցայ այդ քննութեան, յորում եօթն տարուանէ ինչուան տասնըչորս և հնգետասանամայ օրիորդիկ և օրիորդք զարմանք պատճառող կանխահաս խելամտութեամբ և գիւրութեամբ կը ցուցընեն յառաջադիմութիւննին: Իրենց հասակին համեմատ ամենքն քիչ շատ կ'ընթեռնուն ու կը խօսին ռուս բարբառով, որոյ ուսումը պարտաւորիչ դարձած է:...

Պ. Խոճամիրեանցի քով նախաճաշ մը ընելէն ետքը՝ ամենքնիս տան ճակատի ճեմելիքը ժողովուցանք սուրճ խմելու համար: Նոյն միջոցին հանդիպեցաւ արեւու խաւարումը: — Հպիւ թէ տուրջեան աստղը ծած-

կուեցաւ, ամեն կողմանէ արձակուած հրացաններու ճայթիւն կը լսուէր: Քեղացիներն էին, որ կարծելով թէ սատանան է արևը կապողը, հրացաններու ձայնով կը համարին բռնադատել որ թողու: Անտարակոյս, եթէ այս միջոցին գեղի մը մէջ հանդիպէինք, ներկայութիւննիս ալ պատճառ մը պիտի սեպուէր դիպուածիս՝ բնակչաց աչքին: Եկեղեցեաց զանգակներն սկսան զարնուիլ, թաթալք կը փութային ի մզկիթ, և ամենք կը ջանային որչափ կարելի է մեծ աղմուկի ձայն հանել՝ սատանան փախցընելու, որ գեղեցիկ արեգակը իրենցմէ յափըշտակել կ'ուզէր... Ամենք ահաբեկք՝ գետնաշարժի և մեծագոյն աղիտից նշանակ մը կը համարին զայն՝ որ երկու ժամ տեսց կէսօրէն ետքը, քառասուն վայրկեանէն ինչուան երկու և կէս. նոյն պահուն տեսնուեցաւ և ի Գաղղիա:...

Մարդաչափական այլ և այլ քննութիւններնէս ետքը, արեգակը կը սկսի խոնարհիլ ի մայր, և տրամութիւն կու գայ վրաս քանի որ կը մտածեմ

թէ հարկ է բաժնուիլ այս ազնիւ և բարի անձինքներէ, որոնց սիրալիր և համակրական ընդունելութեան յիշատակը՝ չի կրնար անհետանալ սրտերնէս. հարկ է թողուլ այս հաճոյական ուրախան, երազած կապուաս, ուր մտացս պատրանքը փարատող դէպք մը չունեցայ:

Մեր ասպնջականաց անսպառ հաճոյակատարութեամբ կը պատրաստենք նոր կարաւան մը, որ պիտի տանէր զմեզ մինչ ի Ջուզա. և այն վերջին գիշերն ըլլալով՝ զոր պիտի անցընէի յԱգուլիս, կը փափաքէի յերկարել որչափ կարելի էր: Վայելքս աւելի հաճոյալից ընելու համար, Պետրոսեան տիկին իրենց տանիքը հանեց զիս: Մեղմագին և պարզ էր գիշերը, և չորս կողմերնիս քաղաքն շնորհագեղ կամաց կամաց կը հանգչէր, անոյշ և քաղցր հանդարտութեամբ, մինչ գեղնագոյն և արթուն թագուհին գիշերոյ՝ լիաձեռն կը սփռէր մարդկանց վրայ բարեբաստութեան խաղաղական երազներ:

Շարայարելի

